



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 38

— Շ Շ Ա Ր Ա Ք —

17 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱԽԱՌՈՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍՈՂՄԱՆԻ
Տարեկան 50 Ղ.ռ.	Տարեկան 54 Ղ.ռ.	Տարեկան 12 Ձ.ռ.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՑՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՑՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, Ճեղալ Պեյ խանին տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեկուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը օրջինք:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ՁԵՆԻԹՐ՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գալաթները, ուրիշ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — ՁԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանգեսին մեջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:

Հասր 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԵՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(کتابخانه جهان) مطبعه سی — باب عالی جاده سی ۲۳

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ալի ճառարի քիւ 28



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍԵՈՒՆԴ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinineը կը պարունակէ չուտ սննդային մասերն եզան մէին, ուղեղին, ողնուղեղին և ֆոսֆաթներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոյիս նոր բերուած այս անզուգական կազդուրիչ դեղը, 27 տարիներէ ի վեր ծանօթ և գնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգղիոյ, Ճաբոնի և Չինու համալսարաններէն, Վերնապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան ուժասպառութիւն, դաշկութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր չղային տկարութիւն, նիւարութիւն, կուրծքի տկարութիւն, անարիւնութիւն և ընդհանուր միջոցաւորութիւնը կը հաստատէ իւր անզուգական յատկութիւնը:

Ընկերութեան միակնեցիկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐԲ, Պահճէ-գարու, Օսմանեան նամակատան ետեքի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և գեղորէից միջերանոցներու քով:

50-8



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԴԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թի 38

ՇԱՐԱԹ

17 Սեպտեմբեր 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դաճա՛կ քե կերակուր (հմբագրական) . — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ : Աշխարհիկ փոփոխիկ . — ԵՐ. ԹՕԼԱՑԵԱՆ : Գոյնե (Միսթիք բանաստեղծութիւն) . — ՎՀՐ. ՄՈՄՃԵԱՆ : Կես գիշերուան մօմը (Առանձին պատկերներ) . — Վ. ՓԱՓԱԶԵԱՆ : Յիւր ու ցան խօսքեր . — Ա. ԻՍՊԷՉԱՐԵԱՆ : Արուեստասերի մը յուշերը . — ԱՇՈՏ ՄԱՏԱԹԵԱՆՑ : Տեղացի (Ոսանաւոր) . — Օ. ԶԷՆԱԶԵԱՆ : Վայելքներ . — ՍՏԵՓԱՆ ԽԱԶՈՒՆԻ : Շաբաթուան լուրեր :

ԴԱՇՆԱԿ ԹԷ ԿԵՐԱԿՈՒՐ

ԿՍՆԱԾԻ ՀԱՐՑԵՐ

Տարօրինակ չէ՞ք գտներ սա վերնագիրը , որուն երկու տարասեռ եզրերը բաղդատութեան դրուած են հող , և որուն վրայ կուգենք քիչ մը ծանրանալ , սա արդար և իրաւացի համոզմամբ թէ , մեր գերազնիւ ընթերցողները գուցէ կ'օգտուին այս տեսակ հարցերէն , և որոնք աւելի ընտանեկան , աւելի շինիչ հանգամանք մը ունին ըստ ինքեան , քան կարգ մը պոռոտ խմբագրականները , որոնք , մեր կեանքէն դուրս օտար նիւթեր կը շատագոյլեն , և որոնց ընթերցումը Պուաջօի ըսածին պէս՝ յորանջել կուտան , ծոյլ թմրութեան մը ենթարկելով ընթերցողը :

Տարիներ առաջ , մեր չափահաս օրիորդներու մօտ փնտռուած առաւելութիւնը գաղիէրէն բռնութիւնը և գաշակահարութիւնն էր : Աղջիկ մը որ՝ ո՛ր և է սալօնի մէջ Oui , non , mon père , ma mèreի պէս բառեր արտասանել , ան որ կրնար անկիւնը դրուած գաշակին առջև նստիլ ու la prière d'une viergeը զարնել առանց կմկմալու տնտնալու , ա՛ն անիկայ տիպար հարսնացուն էր հրապարակին վրայ ու ձեռքէ ձեռք կը քաշուէր :

Այս համոզմամբ տողորուած ծնողք , իրենց աղջիկներուն չէին խնայէր ,

դաշնակի դասատուներ, ինչպէս նաև թռաթիփ վարժութեան համար օտար մատմադէշներ, որոնք ընդհանրապէս չեղանքեմներ կըլլային ծիծիպիծիախօս ուհիներ, որոնք իրենց ծնողքը ապրեցնելու համար կիյնային ասոր անոր տունը 1 1/2 էն 2 ոսկի ամսաթոշակով:

Բայց, պէտք է ըսել որ, այս օր դաշնակը տէմօտէ եղած է, ինչպէս նաև թռաթիփը, երեկուան վերացականը այսօր դրականի փոխուած է, ուրկէ ծնունդ կառնէ նաև դրամականը: Օրուան փեսայունները ուրախ ենք տեսնելով թէ՛ թուուցիկ ու ցատկաւոր գաղափարներէն բոլորովին հեռու, լոկ դրական և արմատական առաւելութիւնները կը փնտռեն իրենց կնութեան առնելիք օրիորդներուն՝ այսինքն կեանքի ընկերուհիներուն վրայ: Կարելի չէ գտնել ամուսնացու երիտասարդ մը հրապարակին վրայ, որ իրեն ներկայացուաց քանտիտաթիւն մօտ դաշնակահարութիւն և կամ bon jour, bon soirի առաւելութիւնը փնտռէ լոկ, այլ դրականը կուէս սօցես ընել, իր ընտանեկան կեանքի հանգիստին համար:

Երեւակայեցէք պահ մը ֆիզիքական բոլոր բարեմասնութիւններով օժտուած օրիորդ մը որ դիտնայ դաշնակի վրայ զարնել Շօքէնի, Պէթհօվընի և Մոցաւթի հատընալի կտորները գերրնական վարժութեամբ, և բերէք այդ նոյն օրիորդը ամուսնական և ընտանեկան միջակ յարկի մը մէջ, ուր ամուսինը իր վաստակէն կը հայթայթէ նիւթականը: Խեղճ մարդուկը յոգնած պարտաւած օրուան բազմատեսակ աշխատութիւններէն, երբ ստամոքսը պարտկելու համար սեղանին գլուխը անցնի, միթէ Շօքէնի մառջ Ֆիլմէֆոն կամ Պէթհօվընի մէկ ուղեւորի՞ւնը պիտի հրամցնէ կինը իրեն: Միթէ այդ վաստակաբեկ ամուսինը չտալուէ՞ր տաք ապուրի մը, մսեղէն համով կերակուրի մը, վերջապէս, մաքուր պատրաստուած ուտելիքներու, զորս տանտիկնոջ էական և զխաւոր պարտականութիւնն է պատրաստելը:

Մեր մէջ այս էական հարցին բնաւ կարեւորութիւն տուող չիկայ, մենք մեր աղջիկներուն կուսուցանենք դաշնակը, մանտօլինը, շալթակը և նմանօրինակ ֆանթեզիները, ափերով դրամ կը վաստենք օտար դասատուներու նոյն այդ երրորդական, չորրորդական բացառիկ պէտքերուն, և բնաւ չենք խորհիր փորձեցնել զանոնք կերակուր եփելու մէջ, միս ջարդել, բանջարեղէն մը սառելիս հըն: Եւ ահա ասոր համար է որ մեր օրուան աղջիկները ծանր կը քշուին, այսինքն դժուար կ'ամուսնանան ըսել կուզեմ, որովհետեւ զիրենք կնութեան առնողը կը մտածէ իր ընելիք ծաղբերուն վրայ փարթել նաև խոհարարի մը 7-8 մէծիտ ամսակոնը: (Կեսուր ունեցող հարսերուն համար չէ թէև խօսքս, սակայն պէտք է ըսել որ, օրուան կեսուրներն ալ հարսերին անկիւնը նստեցընող պոյէն չեն):

Դաշնակէն առաջ կերակուրը, ահա էական և կենսական առաւելութիւնը, որով օժտուած պէտք է ըլլան մեր օրիորդները: Իրենց կաթնաթոյր մասները ոսկոր ստեղծաշարին վրայ պտտեցնելէ առաջ պարզ սոխ մը ստկելը պէտք է գիտնան, և փոխանակ նորեղուկ ձայնագրութիւններու հետեւելու, կերակուր

պատրաստելու յատուկ գիրքերով պէտք է զբաղին, քանի որ վաղը իրենց ձեռքը խնդրող երիտասարդը — գործը գիտցող երիտասարդ մը անշուշտ — « կերակուր գիտէ » պիտի հարցնէ է՞ն առաջ և ոչ թէ մանտօյին կամ դաշնակ:


Այս կարեւորագոյն խնդիրը պէտք է նկատի առնեն մեր մայրերը և իրենց պարտականութիւն սեպեն ուսուցանել խոհանոցի քիւլինար և անոր տարրական գիտելիքները, այն ատեն միայն իրենց ծնողական պարտականութիւնը լիովին կատարած ըլլալով՝ պիտի կրնան պարծանօք ըսել իրենց գիմող խնդրարկուններուն « Աղջիկս տանտիկին է, կերակուր ալ գիտէ . . . » :

Թէև այս տղերը քիչ մը անախարժ պիտի թուին կարգ մը մօնտէն ուհիներու, որոնք հացը պատառաքաղով ուտելու չափ միմօտիս կեանք մը կանցնեն այսօր ընտանի լոյսին մէջ, բայց անոնք, այսինքն այդ կարգի օրիորդները պէտք է գիտնան թէ՛ տարիները փոթորիկի ժամանակ փչող հովէն ալ արագ կանցնին, և թէ իրենց այդ ամուրի կեանքը քիչ մը քիչ տխուր ազդեցութիւն չունի իրենց ներկային մէջ :

Կերակուր և զայն պատրաստելու կերպը սովորեցէք անիւ քոյրերս, քնօշէէն ալ տուով, դաշնակէն ալ առաջ, և մի խպնիք պարծենալու թէ՛ միտ փելու բազմատեսակ հմտութիւն ունիք ու բիւլուր քանէնի կեփէք, այդ ձեր պարծանքը և խօստովանութիւնը Մոցաութի ամբողջ զործերը գոց գիտնալէն նախընտրելի է : Մի սոսկաք խոհանոցէն, անիկայ ձեր սալօններէն ալ յարգի և աւելի զբօսեցուցիչ է :

Սիրով կը փափաքիմ լայն էջեր բանալ հանդէսիս մէջ այն կարող մասնագետներուն, որոնք կարենան կերակուրներու և զայնս պատրաստելու մէթօքը յօդուածի ձեւով ուղեն հրատարակել, բան մը որ կարծեմ reproche d'amourէն աւելի հրահանգիչ պիտի ըլլայ մեր գեղեցիկ սեռին ամուրի տատրակներուն համար :

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ



ՍՐՏԻՍ ՍԵՂ

Գիշերն է մութ փոքորկայից հողմակոծ
Լսուի ուժգին հովին ձայնը՝ անդրայ
Ու սուլելով մանջելով ողբ ու կոծ
Աննպասակ ունայնութիւն մը կուլայ :

Անարձագանգ խոր լուսեան սրտիս մէջ
Ուր տեղ անեղ հրաքել լեզու մը անեղ
Վեր սողոսկի օձի նման ոգեւոր,
Հսգուոյս կայծէն բոցավառի անդադար :

Նայուածքս ուժգին ներս մխրճեմ սրտս վա՛ր
Ուր միջոց մը կ'այ ընդարձակ ահաւոր
Քանի մը հաս թփոյն կտրիլ զալկահար
Կարիւնոսին մթութիւնը սգաւոր :

Հոն իմ սերս մերք կ'անհետի կիսամեռ
Մոմի մը պէս լուռ վառելով կը հասնի
Սպասումին մէջ օ՛հ անգուր անսարքեր
Ու հոգեւարժ օղորն հեւան անարփի :

Ու աչքերը մերք ետ դարձած կը նային .
Որո՞ւ արդեօք ան կտայտէ հասնումով
Ո՛ւրկէ յուսայ յուսոյ շիր մը անձկագին
Ո՛ւր միտքն ո՛ւր կը սաւառի հեւալով :

Ալ արցունքներ վար կը քափին անխնայ
Կարմրոտած փափախուն սրտին վրայ
Ու սարսուռայ սարսուռը վառ մի յուզման
Բնութիւնը մաքուր սիրոյ մ'անդարման :

ՀԱՅԿՈՒՀԻ ՆԱԶԵԱՆ

ԱՇԽԱՐՀԻԿ ՔՐՈՆԻԿ

ՈՒՐ ՅՕԴՈՒԱԾԱԳԻՐԸ

ԿՐԱՊԱՑՈՒՑԱՆԷ

ԹԷ՝

ԶԳԱՅՈՒՆ ՏՈՂԵՐ ԱՆ

ԿՐԱՑ ԳՐԵԼ ։

Աշուհ . . . (երկու վանկով թառ մը , որուն վանկերը եթէ իրարմէ զատենք , կ'ըլլայ — ա՛շուհ) ։

Գիւղը տակաւ կը մեկամաղձոտնայ՝ նոր վերքեր կարդացած աղջկան մը պէս ։

Օղը կը զովանայ և օրերը հետզհետէ կը կարճնան , (զոյգ մը կարեւոր դէպքեր , որոնցմէ առաջինը՝ բարտըսիւ չունեցողներուն սիրտը կը դողացնէ , իսկ երկրորդը՝ օրականով մարդ աշխատեցողներու հոգիին իւր զերը կը սպառէ , թէ՛ ասկէ ետեւը չպիտի կրնան ա՛լ իրենց գործաւորները օրական տասնըլեց ժամ աշխատեն) ։

Կը զգանք թէ ամառը վերջացած է ալ , և դեղնելու սկսած ծառերը՝ աշունը գուշակել կուտան մեզի ։

Զմրան բուրումները կուգան աշնանային հովերուն մէջէն ։

Տերեւները կը թափթփին արդէն , կարծես յոգնած ամբողջ եղանակ մը ապրելէն ։

Ու , անոնց մէկիկ մէկիկ իյնալը տեսնելով (փը՛ք . . . պիտի ըսէր սիրելի բարեկամս Վ. Փ.) , կը բանաստեղծանամ ակամայ՝ զանոնք նմանցնելու համար մեր սիրոյ պատրանքներուն ։

Ամէն օր , քիչ առ քիչ , տերեւները կը թափին հովին փշելէն ։

Երբ անգամ մը թափին երթան , պէտք է անոնց հրաժեշտ տանք առ յաւէտ ։

X

Գիւղ գացողները կը փութան տակաւ մողվտկել իրենց վրդիները՝ ժամ առաջ վերադառնալու համար Բերա , և ամէն օր « տուներու պէս » բեռցուած կովակառքեր (տե՛ս Զիճքե-Սարաճ) իրենց անվերջ ճադրտուքները կ'երգեն շիտակ-ճամբուն երկայնքը ։

Գիւղը անտանելի դարձած է ա՛լ , նոյն իսկ . . . parvenuներու համար , որոնք սակայն կը յամառին մինչև Դեկտեմբեր հոն մնալ ։

Շողենաւին մէջ , անցորդները զամառաներու մէջ կ'ապաստանին՝ թափուր ձգելով վերնայարկը , ուր քանի մը էքսանդրիկներ միայն կը յամառին դեռ մնալ՝ վեր դարձուցած իրենց բարտըսիւն օձիկները , ինչ որ կ'երեւի թէ շիքութեան sauceն է ։

Լոտոսը՝ քանի մը օրէն պիտի սկսի չափէն աւելի օրրել շողենաւերը , և յաճախակի երկարատեւ անձրեւներ՝ տուններուն մէջ պիտի բանտարկեն փափկասուն տիկիները և նազելի օրիորդները , որոնք ալ չպիտի կրնան առտու իրիկուն իրենց նազեւաճեմ քայլերը ուղղել դէպի ծովուն բաղնիքը , որ մինչև գալ ամառ իր պաշտելի յաճախորդներինը չտեսնուելու սրագը պիտի բռնէ ։

X.

Անցաւ դիւղազնացութեան տենդոտ եղանակն ալ (Զերմութիւն՝ 42 աստիճան) , սակայն իր ակօսները թողուց չառ մը հայրիկներու պիւտճէներուն մէջ , որոնք խախտեցան ա՛յնպիսի նիւթական զօրաւոր երկրաշարժէ մը , որուն քով Իտալիայի անհելի երկրաշարժը տղու խաղալիկ կը մնայ ։

Խեղճերը . . . եթէ իրենց մարմինները դիւղին օդին չնորհիւ քիչ մը գիրցան , բայց համեմատաբար նիհարցան անոնց . . . քրտակները ։

Գարնան սկիզբները , դիւղազնացութիւնը ո՛չ միայն պարզ զրօսանք մը կամ օդափոխութիւն մը , այլ աշխարհիկ բացարձակ պարտականութիւն մը , հաւատոյ դաւանանք մը կը համարուի չառ մը ընտանիքներու համար , որոնք ա՛յնչափ ամօթ կը նկատեն դիւղ չելլելը , որչափ , — օրինակի համար , — կարմիր կօշիկ չհագնիլը ։

Կ'երեւակային թէ՛ երբ որ այս տարի դիւղ չելլեն , ասիկա մեծ իրարանցում առաջ պիտի բերէ աշխարհիկ սաղոններու մէջ , ամէն մարդ քիթին տակէն վրանին պիտի խնդայ , ամէն մարդ մատը պիտի խածնէ՝ խածնելիք ուրիշ ոչինչ գտնելով անշուշտ և անհուն քեյճ մը պիտի զգայ՝ ենթադրելով թէ Այսինչենք սնանկանալու մօտ են , քա-

նի որ այս տարի գիւղ չեկան։ (Օ՛ աշխարհիկ նկատումներու դժուրութիւնը !) :

Ու այդ ենթադրութեան տեղի չտալու համար, գարունը գալուն պէս գիւղագնացութեան տենդը (որ ո՛չ դեղին, ո՛չ ճերմակ) կը ծաւալի, երթցուելիք գիւղերը կ'որոշուին, փողինքը կը ժողվուին . . .

Եւ all right !!!

Խօսակցութիւնները իրենց խօս պարը կը դառնան մի և նոյն նիւթին շուրջը :

— Այս տարի ո՞ր գիւղը պիտի ելլէք :

— Ես Գնալուն կը նախընտրեմ, անիկա աւելի intime շեշտ մը ունի և . . .

— . . . Բանաստանքն ալ աւելի շատ է :

— Ըստ իս Մեծ-կղզին լաւագո՛յնն է նորէն, հայ-լայֆը հոն է :

— Արդեօք Բաղիսընի հայ-լայֆը վերջերս մասնաճիւղ մը բացաւ հոն :

— Սիրելիս, սրամտութիւնդ յօգուածներուդ պահէ՛, ես իմ Պէճիւք-տէրէն ո՛չ մէկուն հետ կը փոխեմ . . .

Ու causerieները, — թեթեւ, գողտրիկ ու զուարթ, — կը շարունակուին . . .

×

Ենթադրենք թէ բարեկեցիկ ու հարուստ ընտանիքները կատարեալ իրաւունքը վայելեն տարուան քանի մը ամիսները անցընելու Բերայէն դուրս, հոն ապրելու համար քիչ մը նուազ mondaine ու աւելի . . . Ծովագալայային կեանք մը, որ կրնայ անշուշտ իր օգտակարութիւնը ունենալ, ամբողջ ձմռան՝ թատրոններու, պարահանդէսներու և երեկոյթներու ո՛չ այնչափ առողջապահիկ մթնոլորտը շնչողներուն առողջութեան :

Գիւղը՝ արձակուրդ մը ըլլայ թերեւս անոնց համար, որոնց ականջները յոգնած նուազահանդէսներու երաժշտութիւնէն, քիչ մըն ալ մեծութիւնը կը փնտռեն, ուր կարենան վարել կիսաշխարհիկ ու կենսագեղջկական կեանք մը, մինչև գալ աշուն, ծովու բաղնիքներու, չքաւէտ ծառաստաններու, ծովեզերեայ casinoներու և ճեփճեր մակ սիրուն նաւակներու մէջ, գոնէ քիչ մը ատենուան համար զերծ՝ նոր ելած մո-

տային, եկող մեծանուն արուեստագէտին, մեկնող նշանաւոր քութակահարին, սարքուած երեկոյթին, տրուած նուազահանդէսին, օրուան աշխարհիկ seandocին, կարգուող աղջկան, ամուսնալուծուած տիկինին, աղջիկ փնտռող պարոնին, en flagrant délit բռնուած էրիկին, գլխէ ելած օրիորդին, բոքէրի սեղանին սիրտմաշուկ ու հայեցիկ տեսքերէն, որոնցմէ զուրկ է գիւղին բազմատարապէս պարզունակ մթնոլորտը :

(Թո՛ղ որ հիմա գիւղերը այնչափ Բերայացած են, որ Բերայի մէջ ճակատարաց հագուած շրջագահստ մը կարելի չէ կրել գիւղին նաւամատոյցին վրայ, առանց կնոջական ակնարկներէ շանթահարուելու) :

Սակայն, այս բարեկեցիկ ու հարուստ դասակարգին քով, — զոր կը կազմէ Բերայի հայ-լայֆին ամբողջ tout le haut du panier, — քիչ մը ծիծաղելի չէ՞ք գտնել ընթացքը այն կարգ մը միջակ ընտանիքներու, որոնք, առանց հայագործին ջեքիլէն մաքրելու և առա՛նց ո և է արդարացուցիչ պատճառի, միմիայն ունեւոյններու նմանելու մարմաջով, երբ տեսնեն մօտենալի՞ք գիւղագնացութեան saisonին, հազարումէկ պատառ կ'ըլլան՝ ստիպելու համար ընտանիքին բարի հայրիկը, — խեղճ մարդ՝ բառին լայնածաւալ առումով, — որպէս զի ի՛նչ ընէ չընէ այս տարի զերենք ալ գիւղ տանի :

×

Ու իրենց նպատակին հասնելու համար, պատրուակները անձրեւի պէս կը տեղան papaին գլխուն, որ շուարած այս տեղատարափին տակ՝ papa ըլլալուն ալ կը զըղջայ, baba ըլլալուն ալ :

— Տիկինը հիւանդ է, տոբոլորը ծովու բաղնիք պատուիրեր է, օրիորդը ջղային է, պղտիկը գիւղագնացութեան պէտք ունի, յետոյ կայ նաեւ տունը-մնացած «պալտըղ»ը, որուն Բերայի մէջ հաւեող չէ եղած, թերեւս ալ անոր ալ բաղդը կը բացուի գիւղի մէջ . . . Եւայն, եւայն եւայն :

Եւ, ինչպէս Այսինչենք և ինչպէս Այնինչենք, ասո՛նք ալ գարնան սկիզբները գիւղ կ'ելլեն, ետ մնացած չըլլալու համար հարուստ ու բարեկեցիկ ընտանիքներէն և

իրենց գիրքը բարձր պահելու համար անոնց քով . . . իրենց խելապատակով :

Տիկինը ուրախ է , օրիորդը կը խնդայ , պղտիկները կը խայտան և պալտոցը առաու իրիկուն քուայիք կը փոխէ՝ առանց յաջողու-
լու սակայն փոխել իր դէմքին repoussoir երեւոյթը :

Ո՛վ կ'ըլլայ տուժողը սակայն :

Նորէն ընտանիքին բարի հայրիկը ան-
շուշտ , որ չի գիտեր թէ ի՞նչ ընէ . . . եր-
կու ճօթը իրար բերելու համար :

Ու կը հարկադրուի՝ ծովու բաղնիքին մէջ
լողալու երթալէ առաջ , մինչև վիզը . . .
պարտքի մէջ լողալ , թերեւս լողալ սովորե-
լու համար :

Ու մինչ առտուն կանուխ անիկա դոր-
ծին կ'իջնէ՝ տունին ծախքերուն համեմու-
համար դրամ գտնելու , ապրիլ , տիկինը կը
դարպասէ , օրիորդը կը դարպասուի և քե-
նին կըսպասէ որ վերջապէս յօժարին զինք
ալ դարպասել :

Օ՛ comédie humaine ! — պիտի բացա-
գանչէր անշուշտ բարեխիշտակ Պ. Օնօրէ՛տը
Պալլադէ , որ . . . անօթի մեռաւ :

×

Գիւղագնացութեան հիւանդութիւնը ա՛յն-
չափ պատրիկ է՝ ոմանց քով , որ կան նաեւ
մարդիկ , որոնք բացարձակապէս զուրկ ըլ-
լալով իրենց փարայովը գիւղ երթալու կա-
րողութենէն — հոգ չէ թէ « իրենց » փա-
րան . . . վաշխառունքունը ըլլայ — կը
գոհանան « քանի մը օրուան համար » այցե-
լութեան երթալով գիւղաքնակ սիրելի՛ բա-
րեկամի մը , որ կէտքերան զիրենք հրաւի-
րելու աննեքելի մեղքը ու անբաւելի յան-
ցանքը գործած են :

Ու « քանի մը օրը » կ'երկարի՛ , կ'երկա-
րի՛ , յաւիտենապէս կ'երկարի՛ , աւարտելու
համար կարծես՝ գիւղագնացութեան եղա-
նակին . . . աւարտելուն հետ :

Կ'երեւակայէք անշուշտ critique կացու-
թիւնը սիրելի բարեկամին , որ չի կրնար իր
հիւրը տե՛ծ ընել կամ վեց-գիրը դնել (ինչ
որ մի և նոյն բանն է) , անոր ծրարները պա-
տուհանէն վար նետելով :

Ատեն տտեն՝ հիւրը — սայղքսը՝ —
խօսք մը ըրած ըլլալու համար կ'ըսէ .

— Է՛հ , ա՛լ փեք չատ նստանք , այս
չաթու փրթինիս ժողովենք :

Սակայն , պարզապէս կենցաղագիտական
պարտքերնիդ կատարելու դիտումովը մի-
այն , դատապարտելի սխալմունքը գործեցի՞ք
ըսելու՝ կարելի եղածին չափ « կէտքերան » :

— Ի՛նչ կ'ըլլայ , սիրելի՛ս , քանի մը օր
ալ նստեցէք :

Այսչափը բաւական է որ չափազանց
փափկանկատ հիւրը քանի մը շաբաթ ալ
նստի՝ սիրելի բարեկամին խաղլը չկոտորելու
համար լոկ :

(Ի՛նչ կրնանք ըսել , ամէն մարդ գիւ-
ղագնացութեան երթալու . . . կերպ մը
ունի) :

Սակայն , գիւղագնացութեան վերադար-
ձին , մէյ մը լսելու է յարգելի պարտապա-
հանչները , որոնց պարտատէքները գիւղ ե-
լած են՝ առանց պարտքերնին վճարելու ,
այլ նոյն իսկ պարտքերնին . . . կրկնա-
պատկելով :

Մարդիկը , գայթակղած չեշտով մը կ'ը-
սեն՝ բարձրաձայն կամ մեկուսի . . . ա՛լ
գործը գիտէ .

— Ծօ՛ , աղբա՛ր , փոխանակ գիւղ ել-
լելու , նախ մեր եօթուշը ելլայի՛ր տէ
պարաքդ տայի՛ր :

ԵՐ. ԹՕԼԱՅԵԱՆ



ՍԱՆԹԻՄ ՄԻ ՏԱ՛Ք

ԱՌԱՆՑ ԱՆԳԱՄ ՄԸ ԱՅՑԵԼՈՒ

“ՀԷՐՃԱՑԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵՄ ԶՈՒԿԱՑ, ԳՈՂՈՒՄԸՆԴԱՐ ՓՈՂՈՅ ԹԻՒ 18

Ուր պիտի գտնէք ամէն տեսակ հագուստի,
ճերմակեղեկի, ֆանթեզիի, աղամանգի, ժա-
վացոյցներու , շոթայներու և ամէն տեսակ
կարասիներու ճոխ մթերք մը :

ԵՒ ԳԻՑԷՔ ԻՆՉ ՊԱՅՄԱՆԱԻ

Ա Պ Ա Ռ Ի Կ

Գնած ապրանքնուդ % 20-ը կանխիկ ,
մնացեալը շաբաթական % 5-ը վճարելով :
Կանխիկ գնողին % 5 զեղչ :

Հէրճայի վաճառատունը կը փութայ ծա-
նուցանել իր բազմաթիւ յաճախորդներուս
թէ՛ մօտ տտենէն պիտի աւելցնէ տեսակը իր
ապրանքներուն , զորս պիտի հրատարակենք
յաջորդիւ :

Գ Ո Ց Ն Ե Ր

ՄԻՍԹԻՔ ԲԱՆԱՍՏԵԼՄՈՒԹԻՒՆ

Կ Ս. Պ Ո Յ Տ

Օ՛հ, կը սիրեմ ես կապոյտները :

Կը սիրեմ երկինքին գիշերուան կապոյտը, ուր փռւած են իր ցուքերով կը փարատէ թաւ աղջամուղջը և հըմայք մը կուտա եթերին կապոյտին, զոր իր ծիրկաթինով կը փափկայ, զգացումները և յոյզերը իրեն քաշելով ա՛յն սրտին՝ որ աչքերն իրեն յառած լո՛ւռ կը դիտէ գիշերուան մէջ իր ջինջ կապոյտը : Կը սիրեմ երկինքին կապոյտը անոր համար՝ որովհետեւ ան իմ գիշերուան խորհուրդներուս ընկերն է, ես՝ իր վրայ նայելով, սիրտս տանջող մռայլ յոյզերը կ'անէացնեմ, և կարծես ա՛ն է, երկինքն է որ կը մոռցնէ սրտիս՝ տուայտանքը :

Պատուհանիս առջև՝ նստած երազուն, կը դիտեմ իր խորհրդաւոր կապոյտը, ա՛յն անբի՛ծ կապոյտը՝ որ մարդուս իղձերը կը սուզեցնէ ու կը սաւառնեցնէ անելանելի բարձունքները :

Գիշերուան վեհ դըշտոն է ան :

Կը սիրեմ ես երկինքին կապոյտը :

* *

Կը սիրեմ ծաղիկներուն ա՛յն կապոյտը՝ որ մանիշակը ունի միայն :

Մանիշակին կապոյտը կ'զգլիս է զիս, երբ տեսնեմ զինքը առաւօտուն, որ գիշերուան ցուրը կը վազեն վրայէն չիթ առ չիթ, և երբ արեւին ոսկի ցանցերուն հետ մէկտեղ կուգայ զեփիւսը շոյելու իր երեսը, ան, այս գգուանքէն իր կապոյտ գլուխը տեսնենքէն դուրս ցցած, կը գինովցնէ զիս, ու սկսիմ ես խանդակաթ մօր մը պէս սիրել զինքը, որուն բոյրէն արքայած՝ կը թուրնամ պահ մը, և երբ սթափիմ իմ սանձ խորհուրդներէս, դարձեալ կը դիտեմ իր գլուխը, որ դէպի ինձ յառած պիշ պիշ զիս կը դիտէ, կարծես ըսելիք մը ունենար ինձի . . . :

Այո՛, սիրելի է ինձ մանիշակին կապոյտը, քանզի իմ խոհալն անով աւելի՛ կը

գեղեցկանայ, անոր կախարդիչ կապոյտին գեղեցկութենէն ան կը հմայուի, կը գինովնայ : Ա՛հ, այդ կապոյտին համար ի՛նչ գեղօններ ու ի՛նչ երգեր հիւսած և ձօնած եմ. ինձի պէս կապոյտներ ու « գեղեցիկ » ը սիրող խոհալիս . . . :

Մանիշակը իր մէջ աւելի՛ գեղեցիկ կապոյտ մ'ալ կը պարունակէ, որ իւր մէջ պահած ըլլալուն համար անտեսանելի է, ու ես այդ անուշ գոյնը գտած եմ, իր ծալ ծալ թերթիկներուն է՛ն խորի ծայրէն, որ կառչած կը մնայ նուրբ թերթիկին հետ՝ իր բարակ ցողունին :

Ո՛հ, կը սիրեմ ես մանիշակին կապոյտը, սակայն բարձ՝, ան կը ջնջէ հիմակ դալարներուն տակ, որուն տերեւներն ալ կ'սկսին կոր կամաց կամաց չորնալ, դեղնիլ, կարելի է քիչ վերջն ալ խաղալիքը ըլլան զեփիւսին համբոյրներուն :

* *

Սակայն աչքերուն կապոյտը ա՛լ աւելի կը սիրեմ ես . . . :

Ո՛հ, այն կապոյտը, որ բխրերուն ներքե կը խաղայ, և գեղեցկութիւն մը կուտայ իր գլխուն մարմնած նայուածքները իր վրայ գրաւելով, ա՛յդ կապոյտը որ սակայն չա՛տ անզուգական և թանկագին է, զիս աւելի կը հմայեն ու կ'զգլիս են, ես այդ կապոյտէն կ'արքայեմ, և այդ՝ միւսներէն չա՛տ խորհրդաւոր է :

Սղաւնիին կապոյտ աչքերէն ինկած արցունքները, մէյմէկ գոհարներ են, որոնք կը փափկան յակինթի մը նման, իսկ կապոյտ աչքերէն ինկած չիթերը, որ գոհարներն ալ թանկագին են, սրտիս մէջ մէյմէկ վէրք կը բանան, որովհետեւ զգայութիւն ունին, և կ'զգան ցաւին կոտորանքը, որուն արցունքները աղամանդներու պէս կը փափրլան, կը յուզուիմ այդ կապոյտէն, որովհետեւ սիրոյ տաք կալակներ դուրս կը պոռթկացնեն :

Կոյսին աչքերուն կապոյտները ես ամուսնէն աւելի կը սիրեմ, քանզի խորհրդաւոր են անոնք . . . :

Կը սիրուին այդ կապոյտները, և սիրելու ալ է անոնք . . . :

Եւ ես կը սիրեմ, ու պիտի սիրեմ տղ կապոյտը . . . :

ԴԵՂԻՆ

Թէ՛ կը սիրեմ, և թէ՛ կ'ատեմ ես դեղինը,
կը սիրեմ ես դեղիններուն մէջը, անմեղ
դեղձանիկը :

Կը սիրեմ քեզ, սիրուն թռչնակ, դուն
որ վանդակին մէջ մէյ մը հոս, մէյ մը հոն
կը ոտոտտես, կը ճռուողես քաղցրիկ երգդ,
ու բանաստեղծի մը նման կը քնարերգես քո
յաւիտենական յանկերգդ, միշտ և ամէն
վայրկեան :

Այո՛, տաղերգու մ'է՛ ան, որուն մեղե-
դին սէր, վերքերէն կոտորացող սրտերուն
սպեղանի ըլլալ, և չի վրդովէր ան ո՛ր և է
մէկը, այլ օրօր մ'է՛ թնոր, որ՝ իր ցաւե-
րուն մէջ կը խոկայ :

Սիրելի ես ամէնուն դեղձանիկ, և ամէն
մարդ զարդն ընել կուզէ քեզ, ըմբշխնե-
լու համար քու մեղեդիդ՝ որ զգայուն բա-
նաստեղծին սրտէն դուրս եկող սիրոյ լացն է :

* * *

Կ'ափսոսամ ես դեղինին վրայ, կ'ատեմ
ես դեղինը :

Այո՛, կ'ատեմ ես դեղինը, բայց ինչո՞ւ .
— որովհետեւ դեղինը աշնան սարսուռը կը
բերէ ինձ, քալած ատենս պիտի հանդիպիմ
չոր չոր և ազաղուն տերեւներու, որոնք
ծառերէն վար թափելով, խօլ խշրտուք մը
կը հանեն, իրենց կէս դեղին գոյնով երկիւղ
կուտան, նաեւ կը խորհիմ ես անոնց վրայ,
որոնք քիչ մ'առաջ, — գարնան — կը
ժպտէին իրենց կանանչութիւնովը, և կը
խայտային իրենց չքնաղ գեղեցկութիւնով,
և հմայիչ սօսափիւններ կը հանէին, մինչ-
դեռ քիչ մը վերջ այն խայտացող տերեւ-
ները, օդին մէջէն դարձդարձիկ ոլորումնե-
րով վար պիտի թափին, և խենդ, խօլ
խշրտուք մը պիտի հանեն : Ու կ'ըսեմ ինք-
նիրենս, կեանքն ալ արդեօք տերեւին
պէս է . . . :

Դարձեալ կ'ատեմ դեղինը, որովհետեւ
մարդ շատ անգամ, մահուան սարսուռը ե-
ցիկ դալուկով պատած կ'ըլլայ, զոր այդ
դալուկին մէջ, աշխարհս իր ամէն մէկ տե-
սակ երանգներով դառնահամ կ'ըլլայ, և
ո՛չ մէկ բան իր աչքին հեշտալի կ'երեւայ,

պատճառը այդ տաղտկալի երեւելուն՝ դե-
ղինն է զոր կը տառապեցնէ մարդս :

Կ'ատեմ ես այդ դեղինը, խորշիմ այս
դեղինէն . . . :

ՃԵՐՄԱԿ

Անուշ է ճերմակին գոյնը ու կը սիրուի
ճերմակը :

Կը սիրեմ ես ճիւղասպիտակ այն ճերմակ
չղարշը՝ որով կը քօղարկէ կոյսը իր գլուխը,
զերծ ըլլալու համար ակնարկներէ : Կը սի-
րեմ նաեւ երկինքին ամպիկներուն ճերմակ
ծուէնները, որ երբեմն երբեմն կը տեսնուին
տեղ տեղ : Երբ կը տեսնեմ այդ ճերմակնե-
րը, հոգիս թեւ կառնէ ու կը թեւածի՛, կը
յածի՛, այդ անհուն անսահման ուկէանին
մէջ, որ գերանըջային ուրախութիւններ,
լուսաթրթռուն երկինքին լուսաւոր շողիկ-
ներուն թոթոված թաքուն քերթներու ներ-
դաշնակութիւնը և Աստուածային յաւիտե-
ական մեղեդիներով զեղուն, զոր կը ցըն-
ցուղին այդ ներդաշնակութեան նուաշները
ճերմակներուն մէջ, զոր իմ հոգին հո՛ն,
այդ բարձրութեան մէջ էր որ անոնց հետ
կը ցընցուղէ, անշուշտ ճերմակներուն տուած
հմայքէն այդքան կ'արբուի :

Կը սիրեմ ճերմակները . . . :

Ճերմակ, ճերմակ պատանքներուն մէջ
է որ կը հանգչի ու կը ննջէ՛ այն կոյսը, այն
գեղանի կոյսը, որ իր սիրտը զգացումնե-
րու փոթորիկներ կը հանեն, զոր այդ ճեր-
մակներուն վրայ պառկած, կը խորհի՛, կը
մտածէ՛ անոր վրայ, որ թերեւս յոյսը կայծ
մը, հոգին պլպուլ մը, և սէրը բողբոջ մ'է՛
միայն, որ հասած չէ՛ տակաւին վշտաց և
թշուառութեանց ալիքներուն, այլ կապուած
է սիրտի մը հետ, որ երբ այդ ճերմակնե-
րուն վրայ ընկողմանի, յիշատակներ կար-
թըննան, ու կը խորհի՛ անբիծ ճերմակներուն
պէս, անբիծ սիրոյն վրայ :

Ո՛հ, կը սիրեմ ես անբիծ ճերմակը :

Վ.Հ.Ր. ՄՈՄՃԵԱՆ

ՁԵԿՈՅՑ

Մեր այն բաժանորդները՝ որոնց հասցէին
դրկած էինք իրենց առ կախ հաշիւները, կը
խնդրուի որ հաճին ընդ փոյթ պատասխանել :

卷之四

— Կընդիկ անկաճդ մէյ մը ետիդ ձգէ ,
խախտէն չը կընամ պիտի ելար , խապար

ես . . . երեսն հայողը բը'ռթ կընէ առջին կը նայի կոր . . .

— Բա հասկցա՛յ . . . աղուոր կընիկ ունիս տէյի խըսխանմիշ կըլլան կոր եռմուռն-ճախները . . . հասկցա՛յ . . . ա՛մա ես անտեղուանքները չեմ եօխսայ . . .

— Աստուած չընէ . . . վրատ բարի, կունտ ու կլոր կնիկս, ըսել չեմ ուզեր կոր քի ճիտտի օլարախ փեսադ կը սիրես կոր տէյի աւա՛ . . . հալխուն պերանը կոցենք տէյի քիչ մը վախիթ, սա դուրսը ներսը շատ մօտութիւն մի ցուցնէր, գիտե՛ս ես, մարդս ախպապ ունի, տիւշման ունի, կըլլայ քի՛ . . .

— Վա՛յ . . . ըսել է քի տուն ինէ չիւպհէ ունիս հէ՛ . . . կիտի սէնի միւզէվիր սէնի՛ . . . սա նայէ, զաւլալը տղուն վրայ բերաւ լախըռտըն քա . . . դուն ան տղուն ինչ պանը տեսեր ես քի ատանկ կը զուրցես կոր նայիմ . . . հէ՛ . . . ես՛ . . . ա՛նէքի որ սահաթ է օձի պէս օլոր օլոր կուգաս կոր դէմս տէ ֆառըն չեմ . . . կիտի սէնի կիտի . . . փեսադ հէ՛, քի զաւակդ ըսել է . . .

— Բա նէֆէս առ կընիկ, փեսիս համար չեմ ըսեր կոր, քեզի է լախըռտըն . . . քեզի համար կըսեմ կոր . . .

— Փեսաս հէ՛ . . . դուն չիտե՛ս կոր քի փեսայ ըսածդ մանչ զաւակ ըսել է, ամա ինչ ֆայտա, բեր ան խելքը քի ասիւրտարը հասկընայ . . . կէտինին տիպը չասնելիք հէրիֆ սէնի՛ . . . քուռտ գօմչուսընը եմէմէզ կըսեն, դուն տահա պէթէր, փեսադ զաւակիդ միսը կուտես կոր . . .

— Բա կընիկ երեսդ ջուր զարկ, ինքզինքիդ եկուր տէ լախըռտընը կտոր մը վրադ առ, փեսի լախըռտըն չիգայ մէյտանը, քիչ մը ինքզինքդ վար դիր, փեսիդ հետ սըխը ֆըխը մի տեսուիր կըսեմ կոր . . . հասկցա՛ր հիմա . . .

— Վա՛յ Յուլիկ վա՛յ . . . ինչ եռմուռն-ճախ պերաններու կեր եղար . . . ինծի նայէ Մարտիրոս աղա քեզի ըսեմ, աս լախըռտըդ ճիշէրս ծակեց, հէմ ալ անդին անցաւ, անէքի ինէ չիւպհէ ունիս, ես աս գիշեր վարի օտան կը պառկիմ, ինչուս պէտք, թող պակաս ըլլայ սիւսիւ օտաս . . .

— Պէ պապա՛մ հիմա ատիտար բըռթըռուելուն տեղը չիգայ, վերը աղուոր ֆէռա՛ օտայ ճիւղիկիկ . . .

— Չէ՛ . . . նալէթ ըլլայ, ես տիրոնէկս բարց կընեմ չուներու պէս կը կծկտիմ վարի օտան, ինծի պէտքը չունի, օտատ ալ քեզի ճիւղիկիկդ ալ . . .

— Կընիկ ամօթ է, զաւակդ տեսնայ նէ ինչ կըսէ, տէր ողորմեայ . . .

— Հատար ունիս նէ աղջկանս ըսես քի սրթողեցանք տէ մարդդ վարը պիտի պառկի տէյի, եանի կայ ես՛ տունը կլոխդ կը փըլցունեմ հա՛ . . .

— Դուն գիտես, ինչ ըսեմ, բան մը քի կընիկս ես, կընիկ ըսելը նամուս ըսել է, ինչ թալիմաթ տաս նէ կլոխ երերցնելէն պաշխա ըսելիք մը չունիմ . . . ուզածդ ըրէ, վարը պառկէ, քիտէմիտը ելիր, դուն գիտես . . .

Եւ այսպէս տիկին Յուլիկ կը յաջողի նոյն գիշերը զատուիլ իր ամուսինէն ու զատ սենեակ պառկիլ :

Թէ ինչ էր նպատակը, անհասկնալի եղաւ բոլորովին :

* * *

Մարտիրոս աղայի և տիկին Յուլիկի այս բանակութիւն իրիկունը, ճաշէն վերջ վերը փեսին, միւսիւ Ղաղարոսին և կնոջ տիկին Վարդուկին միջև սա խօսակցութիւնը կանցնէր . . . :

— Հաւատայ քի, կըսէր տիկին Վարդուկ, խըսխանութենէս չէ քի պերանս կը բանամ կոր, չիրքին կերեւայ կոր տէ ան է, չէնէ հիչ մէկ աղջիկ մը իր մօրմէն խըսխանմիշ կըլլայ . . .

— Ինչ ըսել ուզելդ չեմ հասկնար կոր Վարդուկ, զօռովէն խըռ հանել կուզես կոր նէ ան պաշխա, ինչ տեսար ինչ եղաւ . . .

— Տէր ողորմեայ, չեմ խօսիր նէ գիտես քի քէօ՞ւ եմ, խո՞ւլ եմ, օրուան երեք չէյրէկը մօրս հետ կանցունես կոր, առտուն կելլաս կերդաս, իրիկունս գալուդ պէս, ինծի հետ նայելուդ, անիկայ դէմդ կառնես վըռ վըռ վըռ վըռ կը խօրադուիք քիթ քիթի, ինչ կըսէք, ինչ կը խորաթուիք, ինչ կընէք չիտե՛մ քի . . .

— Կընիկ, մախսուս կընես կոր քի ա-

ռանիս պաղուծիւն մը մտնայ տէ հալսուէն պերանը իյնանք տէյի, կնիկը տէրտէյմիւ կըլլայ կոր իր հալ ու վախտին վրայ, էրիկը բանի ետարար չէ տէյի, փեսայ ըսածդ զաւակ ըսել է, ինչ կուզես, ինչ ընէ, ելլայ դարացիներո՞ւն բանայ տէրտը . . .

— Աղէկ ամա, ես ալ աղջիկն եմ նէ, բան մը ըսած չունի օր մը օրանց, աս մէկ տարուան մէջը քեզի հետ աստար սըռտա՞յ եղաւ . . . չօգ չէյ . . .

— Սա եապանճի կընիկ մը ըլլայ նէ, հայտէ վարդուկս ինծի կը սիրէ կոր, անոր համար չուզեր կոր քի եապանճի կնկան մը հետ անսնուիմ պիտի ըսեմ, ֆախաթ մարդ . . .

— Նայէ Ղազարոսիկս, ծառքդ տո՛ւր, նայէ կէօքսիս ոսկորները տնկուեցան տէրտ ընելէն, մար, քուր ֆիլան չիյտեմ կոր, չեմ ուզեր կոր քի մօրըս հետ ատտար սըխը ֆըխը կէօրիւմիւն ըլլաս վէսսէլամ . . .

— Էյ պատճառ . . .

— Պատճառը սա է քի, կիւճս կերթայ կոր ամօթ չէ՞ եա, քեզի սիրելէս է մի, ինչ է ես ալ չիյտեմ, ան քեզի չիֆի մը քիթ քիթի ըռասթ չեմ իգար կոր . . . մուխ մըն է սիրտէս կը պաշլայէ թէփէէս դուրս կելլայ կոր, ոտքդ պագնեմ Ղազարոսիկս, էօլիւմիս սէպէպ պիտի ըլլաս . . . նայէ վաղը մար պիտի ըլլամ, մեղքը չիւլիքդ . . .

— Էյ իրաւ դուն զէլզէկ ես եղեր եա՛ւ . . . աստեղը, չէքի քեզի պէս չիւպէ, տահա ինչեր, աչքովի կը տեսնան, ծառքովի կը բռնեն կոր տէ, կէնէ ալտըմիւն չեն ընեն կոր քի մուհապէթը չի խանգարուի տէյի, դուն ըսես նէ խըխըռին թօխումը ծառքովը կը ցանես կոր . . .

— Ինչ ֆայտայ, ծառքս չէ խուշըս, ծառքս չէ, ֆառղին չերթամ կ'ըսեմ, աչկս միտքս ձեր երկուքին վրայ կըլլայ կոր պիր տիւզ, ինչ ֆայտայ . . . Գուզում խաղիկըս, մէյ մըն ալ չպիտի ընես անանկ չէ՞ . . .

— Քա կեցիր նայինք, ինչ եմ ըրեր քի մէյ մըն ալ չընեմ պիտի . . .

— Հիչ իշտէ, մայրիկիս հետ կողտուկ տեղը լախըռտը ֆիլան չպիտի ընես, հետը սըխը ֆըխը չախա չէնիւք չի պիտի ընես,

իշտէ աս, պաշխա պան մը եալվար եղած չունիմ եա՛ւ . . .

— Ա՛ . . . վա՛յ վարդուկ . . . հիչ մէկ զաւակ մը մօրը համար ասանկ չիւպէներ կընէ՞ . . . ա՛ . . . կը ցաւիմ . . .

— Յաւը սիրտս զարկած է դաթը, ինչ սե սահաթ է եղեր քի կարգուեր եմ ես, աս բաները թապախի պէս առջիս կը տեսնայի կոր, ամա նէ իսէ . . .

— Տիկին մայրիկին պէս անուշ, Աստուածավախ, դաւակսէր, ո՛ւր կրնայիր գըտնար աճապա . . . ամէն անգամ քի մինակ մնանք տէ հոն չըլլաս, քուկին վրադ կը խօսի, քեզի մէթ կընէ և կ'աղաչէ որ մենք միշտ սիրով ըլլանք, և եթէ ինծի ալ քիչ մը սէր կը ցուցնէ կո՛ր նէ, գիտցած եղիր քու խաթերդ համար է . . .

— Անցած կիրակի, քարոզիչ Սրբազանն ալ ասանկ խրատներ տուաւ, անոր համար չէնեէդ մի յոգնեցունէր խուշս, աս մէսէլէն քարոզի բան չէ . . .

— Էյ ինչ ըսել կուզես կոր սանքի, ներսդ դուրս տուր նայինք . . . կըսէ միւս սիւ Ղազարոս յոնգերը լիւր առնելով, որ սըլլուխութեան առաջին նշանն է :

— Ինչ ըսել պիտի ուզեմ, ձեզի համար վէրէմ ըլլալու չեմ եա . . . մէյ մը ծնեն եմ, մէյ մըն ալ պիտի մեռնիմ հէլպէթ, էճէլովս մեռնիլ կուզեմ տահա՛ . . .

— Քեզի բան մը ըսեմ, դուն գողովէն խըս հանել կուզես կոր . . . ես աս գիշեր աս օտան չեմ պառկիր . . .

— Ինչո՛ւ . . . ինչ եղար քի . . .

— Ինչ պիտի ըլլամ . . . աղէկ գիտեմ քի հոս միալուս պէս լուսցունենք պիտի, վըռ վըռուկը պիտի դնես, ես պիտի ըսեմ, դուն պիտի ըսես, ես վաղը գործիս պիտի երթամ, ետքէն . . .

— Անանկ կուզես կո՛ր նէ եալվար ըլլող չիգայ, ըսելով վարդուկ տեղէն կելլայ ու քիչ մը անդին կը նստի, ճիշդ ինչպէս կընեն երես ելած նոր հարսերը, երբ ուզեն իրենց ամուսնոյն սէրը հրահրել, բայց մեր Ղազարոս աղան, փոխանակ այս կանացի ձեւէն զգածուելու, ալ աւելի կը բարկանայ, և արդեն գիշերուան ժամը յառաջացած ըլլալուն, վերմակը կառնէ և հաղիւ

դուրս կելլայ ինքն ալ իր կարգին վարի սենեակը իջնելու համար, վարդուհի խօսք առնելով,

— Կերպաս կոր ամա բիւշման կըլլաս...

— Ըլլողը ես եմ, դուն հոգի մի ընէր, խըսմէթիս մէջը բան քաշել տանջուիլ կայ եղէր... Ինչ ընեմ...

— Մառքովդ կը քաշես կոր... կը քաշես կոր ամա, ինծի ալ քաշել կուտաս կոր ինչ ֆայտա...

Ու դեռ պիտի շարունակէր խօսքը երբ միւսիւ Ղազարոսի ոտքին ձայնը առաւ դուրսէն որ սանդուխներէն վար կիջնար:

Բուն նիւթը հոսկէ կսկսի:

Միւսիւ Ղազարոս վերմակը շալկած երբ մութ տեղը վար իջաւ, ուղղակի ցերեկին նստելիք սենեակը մտաւ ու առանց ձայն մը հանելու, անկիւն մը կծկուելով սկսաւ խոկալ, մինչ անդի ինքն անկիւնէն նախապէս պառկած տիկին փուլիկ սկսաւ խոկալ:

Միւսիւ փեսան, վայրկեան մը մտիկ ընելէ վերջ ելաւ նստեցաւ բազմոցին վրայ, և սկսաւ ուշի ուշով ականջ դնել թէ ձայնը ուրիշ կուգար: Սկսեալը մութ զնտան էր կէս գիշերուան այդ պահուն, և կենդանական ոչ մէկ շարժում նշմարելի կըլլար ստուերին մէջ:

Ո՛վ էր արդեօք... Ո՛վ կրնար ըլլալ... Արդեօք Մարտիրոս աղան էր, որ թերեւս սիւրբսինէկներէն չի կրնալով քնանալ, եկած էր հոգ քիչ մը հանգիստ քուն քաշելու համար, եւայլն:

Վերջապէս մինչ այս մինչ այն, մէկը կար հոն իրմէ զատ, որ մութին մէջ թէեւ, սակայն կը խոկար և հանդարտ քուն մը կը քաշեր:

Քիչ մը վերջ ստուերը շարժեցաւ, ելաւ նստեցաւ բազմոցին վրայ ու սկսաւ զառանցել ինքն իրեն (սայրխլամիշ ընել):

— Կերած խալթերնին նայէ, կը սիրեմ նէ կը սիրեմ, փեսաս չէ՞ մի... հէմ ո՛վ կը խառնուի, ո՛վ գէշ միտքի կրնայ երթալ, փեսայ ըսածդ զաւակ ըսել է... ամա ինչ է, գիտեմ, ես փառլախ, փեսաս կէօթէրիլի, մութլախ շիւպէ կընեն կոր...

էյ ինչ ընենք զօռօլէն չիրքիննա՞նք հիմա... Աստուած ասանկ լայլիս է տեսեր քի աղուոր զոքանչին աղուոր փեսայ տայ տէյի... իրենց ինչ...

Միւսիւ Ղազարոս որ կը լսեր այս զառանգանքները, հասկցաւ խնդիրը թէ՛ իր անէրոյ և զոքանչին մէջ ալ նախանձի սերմ մը ցանցնուած է, ու առանց շշուկ մը հանելու ուղեց լուռ մնալ, լսելու համար իր զոքանչին գաղտնիքները, սակայն չար սատանան պէտք էր որ կոկորդը խտխտացնէր և պզտիկ հազ մը պատճառ ըլլար գործին խանգարման:

— Է՛օհէօ՛... .

— Վո՛ւյ... գող կա՛յ... քա ո՛վ է... էյ մեռայ նէ՛... .

— Սո՛ւ... Փուլիկ հանրմ ես եմ ե՛ս... փեսադ, Ղազարոսը...

— Տնաչէն տղայ, հոս ինչ բան ունիս աս վախիթ... չերթա՞ն կնկանդ օտան, հիմա տեսնան նէ՛... .

— Թախթապիթի բերէ շատ կար տէ հոս ինչայ քի ըռահաթ ընեմ տէյի...

— Պարազայ ես ալ սիւրբսինէկէն պէօհիւղըրութանս վար ինչայ ամա՛... .

— Էյ անանկ է նէ եա դուն եա ես մէկէրնիս վեր ելլանք...

— Քա ճանրմ կեցիր, սուաջ սա մոմը վառեմ...

— Չէ մարիկս, տահա գէշ... մոմ չուգեր, չելլաս վառես...

— Էյ ասանկ մութ տեղը...

— Ինծի նայէ մարիկս, քեզի բան մը ըսեմ, դուն տէրտ մը ունիս ինծի կուգայ քի... սա ինծի ալ հասկցուր նայիմ... քու հոս պառկելդ սիւրբսինէկի պան չէ չիւնքիւ...

— Պարակը մի փնտուր իրաւ եմ, պաշխա ինչ պիտի ունենամ քի...

— Իմացածիս նայելով կէօյամ քի...

— Աման ինծի լախըռուրի մի բուներ, կելլան վար կուգան... զաթը...

— Ինչ կըլլայ զոքաչս չէս մի, զոքանչ ըսիլը մար ըսել է...

— Վայ կլխո՛ւղ... անանկ կըսեն կոր հալխը... տահա չօճուխ ես դուն, խելքդ չի հասնիր...

— Հապա ի՞նչ, ըստ նայիմ քի ես ալ գիտնամ . . .

— Աման տեղէդ մերերար, ոտքի ծան առնելնուն պէս վար կուգան . . .

— Էյ մօտդ դամ քի բէք բէք չի խօրաթեմ տէ ծանա վեր չերթայ . . .

Նոյն պահուն Մարտիրոս աղա, ուզելով իր կնոջը սիրտը առնել, կը խորհի վար իջնալ, ու երբ մօտը ձեռքը սենեկէն դուրս կելլայ, քովի սենեկէն աղջիկը վարդուհի առիթէն օգտուելով ինքն ալ կը բանայ դուռը ճերմակ գիշերնոցը հաղած :

— Հայրիկ առ վախիթ ո՞ր կիջնաս կոր . . .

— Կրնիկս վարն է տէ առնեմ վեր պիտի բերեմ . . .

— Իմ ալ էրիկս վարն է, պարէ իջնամ տէ ես ալ ան վեր պերեմ . . .

— Քա ի՞նչ կըսես կոր խելքիդ եկա՞ւ . . .

— Հա՛ ես կուիւ ըրինք, առջի իրիկուրէն եօղանը առաւ վար ինչաւ . . .

— Էյ թամամ . . . քալէ նայինք, ըսելով հայր ու աղջիկ մօտ ի ձեռին վար կ'իջնան . . .

Հիմա վարի սենեկին դուռը բաց է: Չքանջ և փեսայ մէկ մէկ վերմակ վրանին սենեկին բազմոցին անկիւնները գրաւած, կծկուած են լուռ անխօս, ինչ Մարտիրոս աղա կէս գիշերուան մօտը ձեռքը և աղջիկը թեւը մտած կը տնկուին սեմին վրայ :

— Հայրիկ, ես ալթըն չեմ կրնար գիմանար . . . իշտէ աչքովս տեսայ, ծառքովս բռնեցի . . .

— Եավրում, քու կէնծուծիւնդ ամէն բան կը կոցէ, ֆախաթ զօռը իմա է քի, աչքովս տեսած և ծառքովս բռնելէս ետքը նորէն խաթլանմիջ պիտի ըլլամ . . ., տունըս վրան է, նամուսս ալ ծառք . . . :

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ



ՑԻՐ ՈՒ ՑԱՆ ԽՕՍԲԵՐ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ — Շաբաթաբերքի օգտակն է, որ ընթերցողին սիրքը կը զովացնէ, յոյզերը կը փարատէ ու վայրկեմաբար ընկնող մտածումները կը վանէ մտքին զայն փոխադրելով տարբեր մթնոլորտներու, անցիւք խոհերու վերացական քեւ, սակայն անբիծ յօսերով երեւակայական կերպով օրհելով վայրիկ մը, անոր խանդոս սիրքը: (Բուն բանաստեղծութիւնը ձեր տուած մեկնութիւնն է կարծեմ. Ծ. Խ.):

ՈՏԱՆԱԽՈՐ — Հանգեսի մը փայլ տալու կը ծառայէ, երբ շղուս չ'է գրուածքը եւ զուրկ բնականութենէ եւ արուեստագիտական մուրք դարձուածմեքէ ու ձեւերէ: (Օխան քանի՞ է. Ծ. Խ.):

ՍԻՐԵՐԳ — Երիտասարդ արտերու քրքրացող հնարն է, որ նոյնութեամբ կը հնչէ ամէն ընթերցողին ականջին, մտքին առջեւ պատկերացնելով վայրկեմական կերպով հեղինակին բարոյական վիճակը, խառնուածքը, վերջապէս անոր արտին անզուսպ պոռքկացումը խօսուն շեւտերով. հոն է որ գրողին արժանիքը կը տեսնուի վեհ կերպով, յսակ ցոլացումով: (Մէլէ չարգիին ալ սիրերդ կրնայ ըսուիլ. Ծ. Խ.):

ՔԼԻՇԷ — Լրագրական մէկ ռէֆլէքս որ յղուածագրին անվճար ու վճարուած յղուածներուն վրայ կ'ուսան, զայն հրճուեցնելու ու ալ աւելի քերքին հանդէպ բոլորանուէր կերպով աշխատելու դրդելով զայն, որու անուան կ'ըլլայ այդ արժանավայել պատիւը: (Այս կէտը չի հասկցայ. Ծ. Խ.):

ԱՇԽԱՏԱԿԻՑ — Թերթին բարեկամները, որ մօտէն ու հեռուէն տալ վերաբերում մ'ունին անոր հանդէպ եւ ի սրտէ կը փափաքին զայն միշտ աւելի լաւագոյն վիճակի մէջ տեսնել. իրենց արտին հրճուանքը այդ լրագրին գրականօրէն յաղթանակը տանիլն է միայն, որուն կ'սպասեն անհամբեր:

ԹՂԹԱԿԻՑ — Օրագրի լրատու հեռուէն մօտէն, լեռնէն ձորէն, գիւղէն ու քաղաքէն, ասոնց մէկ մասը կուտանուր եւ մէկ մասը անկուսի կ'աշխատեն յ'օգուտ քերթին, ունակ ալ փոխան բաժնեգնի: (Իլէ անկուտները. Ծ. Խ.):

Ա. ԽՕՊԵՉԱՐԵԱՆ

ԱՐՈՒԵՍՏԱՍԵՐԻ ՄԸ ՅՈՒՅԵՐԸ

(Շարունակութիւն)

Ինծի համար սովորութիւն մը դարձած էր ամէն ներկայացումի թատրոնին դուռը թափառիլ : Եթէ ցորիկ էր՝ վարժարանէն , իսկ եթէ գիշեր՝ ծնողներու քնանալէն յետոյ անձայն ու անշըշուկ տունէն կը փախչէի թատրոն երթալու համար :

Թատրոնին դուռին առջև երկար ատեն կ'սպասէի , ժամերով չէնքին ծակերէն ներսը կը դիտէի , մինչև որ վերջապէս դռնապանը աղաչանքներու տեղ տալով զիս ներս կ'ընդունէր : Եւ հասաւ օր մը ուր թատրոնին տնօրէնը ինծի հարցունելով ճանչցաւ ընտանիքս և զիս դռնապանին ներկայացնելէ յետոյ հրամայեց որ ինծի միշտ ազատ մուտք տայ թատրոնին :

Պէտք է երեւակայել թէ հոգեկան ինչ անառիկ հրճուանք մը զգացի նոյն պահին : Այլ պիտի կրնայի լիուրի վայելել թատրոնը , կարելի պիտի ըլլար ինծի անյազօրէն ըմբռնել լոկալական հմայքը իմ սիրելի թատրոնիս :

Ամէն ներկայացումի կ'երթայի , ձանձրանալ չէի գիտեր , եթէ ամբողջ դար մը անդադար ներկայացում մը տեսէր՝ գոհութիւնով ու հաճոյքով պիտի դիտէի ու ունկընդէի : Թատրոնէն ձանձրանալը՝ հաճոյք է ձանձրանալ կը նշանակէ :

Ծանօթներու ամենամեծ մասը դիտէր թէ ես դերասան ըլլալու մտադրութիւն ունէի , սակայն հաւատ չէին ընծայեր , « կը մոռնայ » , կ'ըսէին անոնք , անխելահաս էի տակաւին , սակայն ես չպիտի մոռնայի , և իրականութիւնը հաստատեց ասիկա , անշուշտ անոնք ալ չը մոռցան :

Ես իմ անձիս ու համոզումներու գիտակցութիւնը ունէի . սկզբունք մը ունէի՝ որուն պատճառն ու ազդեակը բնազդս էր և որուն հաւատարիմ պիտի մնայի : Անոնք՝ որոնք սկզբունք մը չեն ընտրած ապրուստի կեանքին մէջ , և անոնք՝ որոնք իրենց առաջադրած սկզբունքին հաւատաւոր ու

ճշմարիտ հետեւողներ չէին ըլլար՝ կը բացայայտուի թէ իրենց զգացումներուն և իրենց բնամոյն ու բնածիր յատկութիւններուն վստահ ճանաչողութիւնը չունին : Համոզումի , դադափարի՝ մարդեր չեն կրնար ըլլալ անոնք յաւէտ հաստատակամութիւնը չա'տ մեծ դեր կը խաղայ մարդուն կեանքին մէջ : Մարդուն սիրտին , հոգիին խորը ծնունդ առնող առաջին ի'ղձը , առաջին տե'նջը , և գանկին մէջ ծայր տուող անդրադիտելի դադափարներն են որ վերջնապէս պիտի կրնան անոր ապագայական յաջողութիւնները կազմել : Սկզբունքը ըստածը ա'յդ ըլլալու է՝ որուն համար լաւ խորհէ' , լաւ գործէ' , անթերիօրէն աշխատէ' , և ահա՝ հսկայաքայլ և ճշմարտագոյն յառաջդիմութիւններդ ապահովուած են : Անսկզբունք ապրիլը՝ անծանօթ վայրի մը մէջ աչքերը կապած ընթանալու կը նմանի : Ապրուստի ասպարէզին մէջ տարտամ ու չփոթ քալել չըլլար , որոշ քայլերով հարկ է առաջանալ : Բեզի բարի նպատակէտ մը ընտրէ ու հոն հասնելու համար տքնէ' : Ահաւասիկ կեանքին պահանջումը և դուն ապրած կ'ըլլաս երջանկութիւնով : Փոխանակ անասնական անզգայ երջանկութեան՝ լաւագոյն է մարդկային զգայնութիւնը : Զգալ ու բարին մտածել , ահա՝ երջանկութիւնը մարդուն :

Ահա՝ թէ ինչ էին ճշգրիտ խոկումներս այն ատեն , որոնք մինչև այսօր այնպէս կը մնան՝ անփոփոխ ու անխախտ :

Այլ եւս հաւատարիմ յաճախորդ մըն էի յաճախակի կրկնուող թատերական ներկայացումներուն : Այս պարագան ընտանիքս իմացած էր , որուն համար որքան որ երբեմն կը յանդիմանէր զիս , բայց և այնպէս լռին ներողամտութիւն մը ու թոյլտուութիւն մը կը նշմարէի անոնց ընթացքին մէջ : Դպրոցը , դասերուս ա'լ ուշադրութիւն չէի ընել . պարտականութիւններս չէի կատարեր : Ծուլութիւն չէր աս սակայն , որովհետեւ ես տարբեր պարտականութիւն մը ունէի , որուն համար աշխատութիւն չէի խնայեր : Միտքս ալ կ'աշխատէր սի'րոս ալ :

Ամէն անգամ որ ներկայացումէ մը դառնայի , ինքնին քննադատութիւն մը ունէի

ընկու՝ զիտողութիւններով լեցուն՝ թատե-
րախաղին և գերակատարներուն մասին :
Ինչ պիտի ըլլար իմ քննադատութիւնս, ինչ
արժէք պիտի ունենար ան : սակայն կը բա-
ւէր որ միտքս կը մարզուէր ու հետզհետէ
կ'ընտելանար Արուեստին :

Թատրոնի ու Արուեստին վրայով տեղե-
կութիւններ կը հաւաքէի : Թատերական
գրուածներ կը փնտռէի ու կը կարդայի :
Վերջապէս Արուեստին համար էր աշխա-
տութիւնս :

Այսպէս երկու տարի անցաւ :

(Յաջորդ թիւով)

ԱՇՈՏ ՄԱՍԹԵԱՆՑ

Տ Ե Ն Զ Ա Ն Զ

Ինչո՞ւ չ'ես բողոք որ երգեմ յաւեհ,
Քեզ համար, հոգի՛ս,
Քանի որ քսիւ ինձի «սիրէ՛ զիս,
Սիրեմ քեզ, պրեհ՛ս» :

Սիրոյդ նեղսարէն խըմեցի քիչ, քիչ
Ու գինովցայ ես :
Հոգիս կը մրկի, կ'այրի վերջապէս,
Աչքերէդ մոգիչ :

Այս բզբլխանքին բոյրերէն փարբամ,
Կ'երազեմ անփոք,
Ու քեզի՛, ալուո՛ւս երկինքէն կապոյս
Բան մը կը սեցնամ :

Կուրծքդ՝ բարձ մ'ըլլար, բազուկներդ՝ օրրան,
Ես ալ մանկան պէս՝
— Լոկ քեզ սիրելու անհուն փափաքս —
Նիրհէի վրան :

Օ. ՃԵՆԱԶԵԱՆ

Վ Ա Յ Ե Լ Ք Ն Ե Ր

Հո՞ն վերբ,
Կապոյս երկնգին
Հովանիին տակ,
Պառկած ե լեռը :
Անգիտակ՝
Իւր վայելիք
Անուշաքեան մեջ :

Ու կասարէն
Լեռան հովանի,
Հովիւին խանութ
Երգերն մեղմօրէն,
Կը սահին հեռուն
Գոգը մայրենի՛
Խիս պուրակներուն :

Արեւուն՝ յետին
Շողերն նուաղուն,
Կը խուժէն տակաւ
Դեմի լեռներէն,
Ու հորիզոնին՝
Գոգը կապուտակ
Կը շառագունի :

Թռչունները՝ խմբովին
Հրածեօսի երգը,
Կ'երգեն խօլաբար,
Ու իրենց խմբերգը,
Կը քաղուի
Դայար դաշտերուն
Ամայութեան մեջ :

Իրիկուն ե :
Հովիւը հապնեպ
Սրինգը կը հնչեցնէ,
Վերջին ակնարկը՝ սեւեռած
Կարմած հորիզոնը կը գգուեն,
Ու յամբընքաց
Կը հեռանայ լեռան կողմէն :

Տխուր ե լեռը,
Աղօս կապոյսը երկնքին
Թուխ ամպերը մթազներ են,
Կուլայ ան :
Ու հեծկրթանքներն գիտերային
Մեղմ գեփիւռէն կը փուլին,
Անդունդին խոր :

Վարկեանները կը սահին
Թոյլ ու երերուն,
Լուսինը տակաւ
Իւր աղուր դեմքը կը ցուցադրէ :
Կը կայքէ ան,
Ու ոսումին մեջ՝ խանդավառ
Դեմքը կ'ոգեւորի :

Լեռը կարծես պահ մը կը ցնցուի,
Տառապանքներն կ'անհետան,
Լուսինն ժպտալիւ՝
Ու դիւքիչ նայումսին տակ :
Սիրունիքն ե անոր :
Իտալ սէր մ'է որ կ'երգեն,
Սէր մը՝ որ յափրանք չ'ունի :

Մարդիկ ալ կը սիրեն,
Բայց իրենց սերերն՝
Աղօս, նենգաւոր,
Հեշտանգին գոգը,
Հանգրուան մը կը փնտռեն :

ՍՏԵՓԱՆ ԽԱԶՈՒՆԻ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Սկիւտարի երեք թաղերը միացան, ու միաձայն սկսան իրենց եկեղեցական և կրթական կարեւոր գործին, որուն այնքան կապասէր թաղեցին, որով անմիտ հակառակողներն ալ իրենց լեզունները թաղեցին:

— Թաւշանճեանի մրցանակին անարժան գրագէտներէն մէկ քանին, գրական տարբեր ուղղութեամբ մը հրապարակ նետուեցան, բայց այդ գրածովին մէջ քաջ լուղորդ մը չըլլալնուն՝ դիտողներու աչքին առջև իրենց լուղորդի անճարակութիւններն հաստատուեցին:

— Գ. գիւղի նաւամատոյցին վրայ էֆօնօմիսք տիկին մը անցեալ օր ձմեռուկ սակարկած պահուն՝ շոգենաւը փախցուց, շոգենաւին մէջ իրեն սպասող ամուսինն ալ . . . խելքը:

— Ալէմ-Տաղիէն մեզ լուր կուտան թէ, վայրը ամբողջ ննջարանի վերածուած է հիմա, ու գտնուողները այր կին ազլիկ, գիշերնոցներով սկսած են պատկիլ հոս հոն:

— Գընալըէն կը գրեն թէ՝ մէկ երկու օրուան զով օգերը պատճառ եղան օթէլճիներէն մէկուն տիրոջ կարմիր պիպէռով ֆասուլեա հրամցնել իր յաճախորդներուն, ստամոքսները տաքցընելու համար:

— Կիմանանք թէ ընկոյզասէր տիկին մը Վոսփորի շոգենաւին մէջ, չի կրնալով համբերել, Բիկմալեօնի 1/4 ոսկինոց ճերմակ կանթերը վրայ է տուէր:

— Ներկայ ամսոյս մէջ դպրոցներու բացման առթիւ, անխոստափելի փորիցաւը, այս տարի վարժուհիները նեղելու վրայ է աւելի: Կիմանանք թէ իր

պաշտօնին դիտակցութիւնը չունեցող ունի մը ամէն գիշեր լապտեր ի ձեռին քերականութիւն սովորելու կերթայ երկու շաբաթէ ի վեր:

— Սիրքէճի Պըռասըռի Գօքազի մէջ միւսիւ մը ալաֆըռանկայ կեղծելու համար, բալամուտ թաւափին վրայ ոստ անկիւնգ անցուցեր է:

— Գառը-գիւղէն մեզ կը հաւատեն թէ, տեղւոյն Մօտային մօտան անցած ըլլալով չիք երիտասարդները սկըսած են պիղառսօին:

— Իմացածնուս նայելով՝ երեք միացեալ թաղերու վարժարաններէն միոյն մէջ, վարժապետ մը երկայն-թաթիկութեան սկսած է, իր բաղուկները պլտիկներու դիֆարեկ ոսկորներուն վրայ փորձելով: Ընդ. Տեսուչին ուշադրութիւնը կը հրաւիրենք այս մասին:

— Խաչկերացի տօնին առթիւ Պոլսոյ չորս անկիւններէն Սկիւտար գիմող ընտանիքները երեքշաբթի առաւօտ փռութիւն չալկած գարձան իրենց բունկալը: (Արդեօք տաննոց մը ձգեցին բունկալը):

— Տակաւ մօտեցող ձմրան պիտոյքները պատրաստելու համար ամէն տարի այս եղանակիս ծայր տուող էրիկկիկան վէճերը կամ սկսան և կամ պիտի սկսին:

— Անցեալ օր Թոր-Գաբու, հարս ու կէսուրոջ բանակուի մը միջոցին, երկու կողմերը այնքան տաքցեր են, որ հարսը բռնկեր է . . . Ետին գտնուած կրակորանէն:

Արտօմաէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Պապ-Ալի հասէտի քիւ 23

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԾԱՆՈՒԹՅԱՆ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուլթան Համամ, Թօփապեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանքային տուրքներով եւ գիններու անմրցելի աժանութեամբ շահած է բոլոր իրեն գիւմուշ յաճախորդաց վատահովիտները, այս անգամ ձեռնարկ յատուկ ընտիր հագուստներու, կանանց քէյրոյիներու եւ տղայոց շիւք եւ գիւմուշներու փաթիլներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի եւ ուրիշ նմանօրինակ պիտոյից։

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրէ է. Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին։

50—2

ՇԵՆՔԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱԹ ՆԵՐԿԵՐ

National wall coating & Lythite

Աժան, լուսաւոր, շուտ կը չորնան, վրայ չեն եղնել, գոյներնին չեն նետեր, ջուրի եւ անձրեւի կը դիմանան, մուկները կը ջնջեն եւն. եւն.

Պատանայի ներկերուն իւրաքանչիւր քառ. արշընը 10—15 փարայ։

Ներսի եւ դուրսի ներկերուն իւրաքանչիւր քառ. արշընը 20—30 փարայ։

Տեղւոյս ամէն կողմի Պատ. յաճախորդաց դիւրութեան համար, վաճառատունս պատրաստ է սոյն գներով իր վրայ առնել ամէն գործ, թէ ներկն եւ թէ գործաւորոյնէն մէջն ըլլալով։

Թուրքիոյ միակ կեդրոնատեղին

Կ. Պոլիս, Ալաճա-Համամ, Պազըր-ճըլար թիւ 26, Գ. Անէմեան։ — Գաւառները գործակալներու պէտք կայ, դիւրամատչելի պայմաններով։

18—20

ՖԷՆԻՔՍ ՕՔՐԻՇԻՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Իրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Ժրանգ

ՀՐԳԵՀԻ ՃԻՒՂ

Իրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Ժրանգ

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք եւ կարասիք։
ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք մաողկային կանքի վրայ։
ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ շոգինաւի՝ եւ առաջապահաւի վրայ։

Ընկերութեանս գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԵ, Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Ալեանաք խան, Թիւ 11—16։

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ։

Լիպգոր ճերկայացուցիչ


Գ. ՖԷՐԱՏԵԱՆ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԵՑԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԵԻ

ՀՈՏԱԻԷՏ ԹԵՑԵՐ

Կ. Պոլիս, Պանդեֆափու, ձեյալ-Պեյ խան, քիւ 10

ՀԱՅՈՒՀԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ ԱՏԱՐԱԶԱՐ

Այս վարժարանը, զոր կ'վարեն ինն անդամներէ բաղկացած Խնամակալութիւն մը, եւ բնիկ ու Ամերիկացի 11 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը, հիմնական դաստիարակութիւն մը կու տայ բոլոր իրեն դիմող հայ աղջիկներուն: Կ'աւանդուին բնական, իմաստասիրական, չափական եւ այլ գիտութիւններ: Մասնաւոր ոյժ կ'որուի հայերէն եւ անգլ. լեզուներուն. կ'ուսուցուին նաեւ քուրճերէն եւ Ֆրանսերէն լեզուները: Վարժարանին երկու ընդարձակ եւ օդաւեճ շէնքերը, ինչպէս նաեւ Խնամակալութեան երկու բժիշկ անդամներ մեծապէս կ'ապահովեն աշակերտուհիներուն առողջութիւնը: Անասօյուի Երկարուղին, որուն մէկ մասնագիծը մինչեւ հաղաքս կ'երկարի, ճամբորդութիւնը խիստ դիւրին եւ հանելի կ'ընծայի: Գրեթորփիկներու տարեթոսակն է 12 օսմ. ոսկի, զոր երկու մասնավարով պէտք է հասուցանել: Դաւանակի դասի համար 5 կամ 3 ոսկի կ'պահանջուի, դասառութեան քիւին համեմատ: Երգեհոնի դասի համար 2 1/2 ոսկի կ'պահանջուի: Վարժարանին ԻԱ. տարեցանք կ'սկսի Սեպտ. 13 (Ն.Տ.), Դե. իրիկունը: Վարժարանին նոր յայտագիրն ուզողներուն ձրի կ'ըրկուի:

Աւելի տեղեկութեանց համար դիմել Մր. Բիքի, Պայպըլ Հաուս, Կ. Պոլիս, կամ գրել Տոգ. Ս. ԷՃ. Դավանեանի, Ասեմապէտ Խնամակալութեան, Ասաբազար: 8-8

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ ՊԱՐՏԻԶԱԿ

Վարժարանիս ԻԷ. տարեցանք կըսկսի Սեպտեմբեր 6 ին (Ն.Տ.): Հաստատութեան Տնօրէն Վեր. Ռ. Զեյմպրա եւ իր Տիկինը արդէն վերադարձած են իրենց երկամեայ բացակայութենէն, եւ յառաջիկայ տարի ուսուցչական խումբին վրայ պիտի աւելնան Բանասալի մէկ նշանաւոր համալսարանէն երկու Ամերիկացի օրջանաւարտներ, որոնց մէկը գլխաւորապէս պիտի աւանդէ առեւտրական դասընթացը:

Աշակերտները բնանեկան խնամք կը վայելեն գրեթորփիկ ուսուցիչներուն, հաստատութեան մասնաւոր բժիշկին հսկողութեան եւ Տիկին Զեյմպրաի մայրական հոգածութեան տակ:

Գրեթորփիկ աշակերտներուն տարեթոսակն է 16 Օսմ. ոսկի, 8 ոսկին Սեպտեմբերի սկիզբը եւ մնացած 8 ոսկին Յունուարի վերջերը վճարելի:

Վարժարանս յատուկ ուսուցիչ մը ունի գործիական երաժշտութեան համար, այս դասին համար տարեկան մասնաւոր վճարումն է 1 1/2 ոսկի Օսմ.

Աւելի տեղեկութիւններու համար դիմել Մր. Բիքի Պայպըլ-Հաուս, Կ. Պոլիս, կամ Տնօրէնութեան Պարտիզակ:

Այն աշակերտները որոնք Պոլիսէն եկած տեսնին կէս գնով տոմսակ առնել կուզեն, պէտք է որ մինչեւ Սեպտեմբեր 1, Ը. Ն. Իրենց անունները արձանագրել տան Գրիգոր ԷՃ. Շահպազեանի, որ կը գտնուի ի Պայպըլ-Հաուս քիւ 10: 10-7